

«ՄԱՅՐԵՆԻ ՊԱՇՏՊԱՆ» ՇԱՐՔԻՑ

ՄԱՅՐԵՆԻ ՊԱՇՏՊԱՆ ԻՄ ՀԵՐԹՆ Է (ԱՍՏՈՆՔԻ ՄՐՅՈՒՅՔ՝ «ԼԵԳՈՆ ՀԱՅՐԵՆԻՔ Է...»)

– Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես, Դու սրտիս մեջ ես, ոչ չեզվիս վրա, Իմ սրտի միջից, թե սիրտս ճեղքես Դրոշիկ բոցը պիտի հուրհրա:

Փոքրիկ Մոնիկայի շուրթերից այնքան հուզիչ են հնչում Շիրազի այս տողերը, որ քիչ է մնում, իրոք, «գոռա քո սիրո մասին», առ այս մանկահասակ հայորդիները, որոնք եկել են ասելու, որ ուր էլ լինի հայր, չի մոռանա մեր արևահամ բառը, ասել է մեր լեզուն, որը ամենասիրելու մարդու՝ մայրիկի անունով կոչվում է Մայրենի լեզու: Փետրվարյան այդ օրը ջերմ ու լուսավոր էր

այնուհետև 11-14 և բարձր տարիքի ասունքողները:

Միմյանց են հաջորդում հայ պոեզիայի մեծերի Չարենցի, Շիրազի, Պ. Սևակի, Ս. Կապուտիկյանի, Գ. Էմինի, Շ. Սահյանի, Վ. Տերյանի սրտահույզ տողերը՝ նվիրված հայրենիքին, մայրիկին, մայրենի լեզվին...

Առանց հուզմունքի անհնար էր լսել ամենակրտսեր ասունքողներին՝ Արտավազդին, Վիկտորյային, Գայանեին, Մարիամին, Էդվարդին, Սոֆյային, Մարինային, Արտակին, Գայանեին, Թամարային, Լիլիթին, Գևորգին, Գարրիելային, Մարգարիտային և շատ շատերին:

Միրտոյ ուղչում է հպարտությունից, երբ նրանց շուրթերից հնչում է մաքրամաքուր հայերենը, երեխաներ, ովքեր ծնվել ու հասակ են առել հայրենիքից հեռու:

Անկախ այն բանից, թե մրցույթային որ տեղերը կգրավեն նրանք, ուզում են սրբտանց շնորհակալություն հայտնել նրանց ծնողներին, տատիկ-պապիկներին, ուսուցիչներին, այս խնամքի ու հոգածության համար՝ առ մեր հազարազանձ հայոց լեզուն: Հուզիչ էր նաև ազգությամբ ռուս երիտասարդների՝ Լադեժայի, Անաստասիայի, Կիրիլի հայերեն ասունքը: Ծափերով ընդունվեց նաև Լիլիթ և Գևորգ



Ապա ելույթ ունեցավ բանաստեղծուհի, ՀԳՄ անդամ, բազմաթիվ գրքերի հեղինակ Մուսաննա Հովհաննիսյանը: Բանաստեղծուհին իր վերջերս հրատարակված «Լույս կլինի» գիրքը նվիրեց ներկաներին և շնորհակալություն հայտնեց ուսուցիչներին հայոց լեզվի պահպանման, տարածման, եռանդի ու ջանասիրության համար՝ այն համարելով հայրենասիրական մեծ առաքելություն:



Դոնի Ռոստովի հայ համայնքի դահլիճը: Տոնական տրամադրություն իրենց հետ բերեցին տասնյակ երեխաներ՝ պայծառ աչուկներով, ազգային տարազներ հագած, եռագույնով ու ծաղիկներով:

Նրանք՝ շուրջ 35 պատանի ու աղջիկ, մարզի տարբեր քաղաքներից ու գյուղերից եկել էին մասնակցելու նախապես հայտարարված ասունքի մրցույթին:

Ուսուցչուհիներ՝ Շովինար Մարգարյանի, Լուսինե Պետանյանի, Արմինե Հովսեփյանի, Անահիտ Հարությունյանի, Լիլիթ Թևոնյանի, Ռուզաննա Կարապետյանի եռանդուն ջանքերով կազմակերպված մրցույթը սկսվեց, նախ ներկայացնելով մրցույթի կարգը՝ տարիքային տարբեր խմբերի, թեմատիկայի, գնահատման չափորոշիչների մասին հաղորդումով, ապա ներկայացվեց մասնագիտական ժյուրիի կազմը (նախագահ՝ բեմադրիչ-ռեժիսոր Մամվել Ջաբարյան, բանաստեղծուհի Մուսաննա Հովհաննիսյան, լրագրող Մոնա Կարապետյան, վաստակաշատ ուսուցչուհի Շողիկ Միմավոնյանի, ուսուցչուհի Արմինե Ղազարյան, պարուսույց Հրաչիկ Գևորգյան):

Դահլիճը լեփ-լեցուն էր ծնողներով, ուսուցիչներով, հյուրերով: Հերթով ելույթ են ունենում նախ 5-7 տարեկան, ապա՝ 8-10,



Մկրտչյանների տատիկի՝ Աիդա Մնացականյանի ասունքը: Մրցույթն ավարտված է: Մինչ ժյուրին կամփոփի արդյունքները, ներկաների համար հայոց լեզվի վարպետության դաս անցկացրեց վաստակաշատ ուսուցչուհի, բազմաթիվ մասնագիտական գրքերի հեղինակ Շողիկ Միմավոնյանը:

կարգեր՝ «Արտահայտիչ խոսք», «Արտիստական մատուցում», «Անթերի հայերեն», «Ամենակրտսեր ասունքող», «Ամենաբանական խոսք» և այլ անվանակարգեր:

Մրցույթի արդյունքները ներկայացրեց ժյուրիի անդամ Արմինե Ղազարյանը, մրցանակներն ու դիպլոմները հանձնեց Դոնի երիտասարդական միության նախագահ Գևորգ Գևորգյանը՝ բոլոր մասնակիցներին մաղթելով ուժ ու եռանդ՝ հայոց լեզվի պահպանման ու տարածման գործում:

Դժվար է ասել, թե իրոք ով էր հաղթողը: Այսօր հաղթեցին բոլորը, հաղթեց մեր քաղցրաբառ հայոց լեզուն, հաղթեց հայ մայրն ու ուսուցիչը՝ պատգամելով նոր սերնդին: «Մայրենիքը պահպանելու քո հերթն է»:

Մոնա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, լրագրող